



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 132-Ս

ք. Երևան

«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2020 թվականի հոկտեմբերի 09-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 8 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) 2020 թվականի հոկտեմբերի 09-ին Հանձնաժողով ներկայացված եթերի ձայնագրությունների դիտարկման արդյունքում արձանագրել է Հեռարձակողի «Արմնյուզ» տեսալսողական ծրագրի կողմից «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման հեռարձակման ժամանակ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի հոկտեմբերի 09-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2020 թվականի հոկտեմբերի 09-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժնի կողմից դիտարկվել է Հեռարձակողի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 09-ին Հանձնաժողով ներկայացված 2020 թվականի սեպտեմբերի 25-ի և սեպտեմբերի 26-ի եթերի ձայնագրությունները և դիտարկման արդյունքում 2020 թվականի հոկտեմբերի 09-ին կազմվել է արձանագրություն՝ Հեռարձակողի կողմից («Արմնյուզ» տեսալսողական ծրագրի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի եթերում ժամը 22:07:27-ին և այդ հաղորդման կրկնությունը 2020 թվականի սեպտեմբերի 26-ի եթերում ժամը 16:10:30-ին) Անժելա Թովմասյանի «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման (45 րոպե տևողությամբ) հեռարձակման ընթացքում հնչեցվել են հավաստիությունը չստուգված փաստեր և չհիմնավորված արտահայտություններով և այսպես կոչված գնահատականներով նպատակաուղղված թիրախավորել են Հայաստանի Հանրապետության վարչապետին և նրա ընտանիքը՝ փորձելով ստեղծել անվստահության

և խուճապային մթնոլորտ երկրում և թշնամական վերաբերմունք վարչապետի անձի և գործողությունների նկատմամբ: Արձանագրվել է նաև, որ հնչել են ակնհայտ կեղծ մեղադրանքներ ուղղված ՀՀ բժիշկներին, կասկածի տակ են դրվել բժշկական համակարգի կողմից տարված աշխատանքների և ոչ միայն բժշկական, այլև հետազոտական տվյալների հիման վրա հաղորդված ինֆորմացիայի հանդեպ՝ նսեմացնելով բուժաշխատողների աշխատանքը Covid-19-ի դեմ պայքարում:

Համաձայն արձանագրության նշված արարքը համապատասխանում է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հատկանիշներին:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2020 թվականի հոկտեմբերի 12-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը Հանձնաժողով գրավոր բացատրություն չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հեռարձակողի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 25-ին և սեպտեմբերի 26-ին հեռարձակված Անժելա Թովմասյանի «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման հյուրերն էին, ինչպես իրենց ներկայացրեց հաղորդավարը՝ հոգեբան Կարինե Նալչաջյանը և «Երևանի այլընտրանքային քաղաքապետարան» նախաձեռնության հիմնադիր Սոնա Աղեկյանը:

«Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման հեղինակ և վարող Անժելա Թովմասյանի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի (կրկնությունը սեպտեմբերի 26-ին) հեռարձակումը կարելի է արձանագրել թերևս, որ այն այնքան էլ չի տարբերվում հաղորդաշարի մյուս թողարկումներից՝ հաղորդավարի տիպիկ և ուղղորդված նմանատիպ հարցերը, հաղորդմանը բնորոշ հատուկ ոճով նյութերի և հարցադրումների ներկայացումը: Արձանագրենք, որ այս հաղորդման հյուրը Սոնա Աղեկյանը սույն թվականի ապրիլի 06-ին ևս «Հայելու առաջ» հաղորդման հյուրն էր և այնտեղ հնչած արտահայտությունները և կարծիքները, որոնք պարունակում էին գոեհկաբանություն և հայհոյախոսություն հիմք էին հանդիսացել Հանձնաժողովի 19.05.2020թ-ի թիվ 37-Ա որոշումն ընդունելու համար, համաձայն որի՝ «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված տույժը՝ «Հայելու առաջ» Անժելա Թովմասյանի հեղինակային հաղորդման ընթացքում արձանագրված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 90-Ա որոշմամբ սահմանված պահանջների խախտման արդյունքում:

Տեսալսողական հաղորդումը սկսվում է հաղորդավարի՝ ողջունի խոսքով, և հնչում է առաջին հարցը՝ արդյոք հավատում եք վարչապետի կողմից Կառավարության նիստի ժամանակ հայտարարած կորոնավիրուսի հետ կապված հետագա զարգացումների վերաբերյալ հայտարարությանը և հարց ու պատասխաններով

զարգացնում են այս թեման: Ստորև բերենք վերը նշված արձանագրությունից քաղվածք, այս թեմայով հաղորդավարի և հյուրերի արտահայտություններից.

(≈1:00) – *Վարչապետը Կառավարության նիստի ժամանակ, երևի ունենալով ինչ-որ տվյալներ, փաստեր, կանխատեսում արեց, որ կորոնավիրուսի հետ կապված հետագայում հնարավոր են նոր բարդացումներ և զարգացումներ, Ձեր կարծիքը այդ հայտարարության վերաբերյալ:*

(≈1:15) – *Չեմ հավատում վարչապետի որևէ խոսքին, ինչպես որ չեմ հավատացել երբևէ: Վարչապետ աշխատող անձր ինչ մտքին գալիս է, հորինում է և ստում: Կորոնավիրուսով վարակված մարդիկ այդպես էլ մենք չտեսանք Հայաստանի Հանրապետությունում: Կորոնավիրուսի թվերը իրենք ցույց են տալիս, որ աճում է, սակայն մի քանի օր անց ներկայացնում են, որ նվազում է: Ինքը կարասն ընկած մուկ է և հիմա, քանի որ նա տեսնում է, որ նախապատրաստվում են հանրահավաքներ և իր վախճանը շատ մոտ է, ստիպված, որպեսզի կարողանա այդ կարասի մեջ երկար ժամանակ մնա անելու է այնպես, որ հանրահավաքներ քիչ լինեն և քիչ մարդկանցով, որպեսզի իր կարասի մեջ ինքը երկար գոյատևի և հնարավորինս թալանի:*

(≈2:35) – *Հայտնի չէ ինչ գիտական, հետազոտական տվյալների վրա են մեզ հաղորդում այս կամ այն ինֆորմացիան: Կորոնավիրուսային պատմությունը իր ետևում շատ թաքնված շերտեր ունի: Եթե ուզում ես մարդուն դնել ծանր հոգեվիճակի մեջ, նրա կյանքում ստեղծիր անորոշություն: Վարպետորեն մեր կյանքում անորոշություններ են ստեղծվում:*

(≈4:00) – *Վարչապետ աշխատող անձր պարզևատրում է այն բուժաշխատողներին, ովքեր ինֆեկցիոնում չեն աշխատել: Ճիշտ է, հայտարարեց, որ նրանց ևս կպարզևատրի, որովհետև ահռելի աղմուկ էր բարձրացել: Պարզևատրել էին այն բժիշկներին, ովքեր իրենց կողմից կոպիտ ուղղորդված ձևով, հավատարիմ չլինելով Հիպոկրատի երդումին, սպանություններ են արել: Ընթանում են դատական պրոցեսներ և պարզվում է, որ նրանք կորոնավիրուսից չեն մահացել, այլ հիվանդանոցում ստացած կոտրվածքներից, ուղեկցող այլ հիվանդություններից, երկար ժամանակ սոված և ծարավ մնալուց:*

Չենք կարող չարձանագրել, որ կորոնավիրուսի ծագմանը զուգահեռ տարածվեց նաև «ապատեղեկատվության համաճարակը», միանգամից սկսեցին բամբասանքներ, կեղծ լուրեր, հրապարակվեց մեծ թվով այնպիսի ապատեղեկատվություն, որոնք կարող էին վտանգել հասարակության առողջությունը և նպաստել կորոնավիրուսի տարածմանը: Եվ այդպիսի ապատեղեկատվության օրինակ է նաև «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մեջ այս արտահայտությունները՝ *պարզևատրել էին այն բժիշկներին, ովքեր իրենց կողմից կոպիտ ուղղորդված ձևով, հավատարիմ չլինելով Հիպոկրատի երդումին, սպանություններ են արել: Ընթանում են դատական պրոցեսներ և պարզվում է, որ նրանք կորոնավիրուսից չեն մահացել, այլ հիվանդանոցում ստացած կոտրվածքներից, ուղեկցող այլ հիվանդություններից, երկար ժամանակ սոված և ծարավ մնալուց:* Այսպիսով, կեղծ մեղադրանքներ են հնչում բժիշկների հասցեին, որ հիվանդանոցներում բուժվող հիվանդները մահանում են ոչ թե կորոնավիրուսից, այլ ուղեկցող այլ հիվանդություններից կամ *երկար ժամանակ սոված և ծարավ մնալուց:*

Այս իրավիճակը կարող է լինել վտանգավոր, քանի որ խոչընդոտում է այն մարդկանց օգնություն ցուցաբերելուն, ովքեր ունեն դրա կարիքը և ստահող լուրեր տարածելով վարակի մասին, թշնամանք առաջացնելով բուժաշխատողների հանդեպ (օրինակ *«սովից*

մահացած հիվանդներ» արտահայտությամբ) այն հանգեցնում է առողջապահության ոլորտի աշխատողների հանդեպ թերահավատության և այդ թերահավատությունը տարածվում է նաև գիտության, առողջապահության ինստիտուտների և համակարգերի նկատմամբ:

Միաժամանակ նշենք, որ Օրենքի համաձայն՝ արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը, այսինքն կոչ անել, որ մարդիկ մահացել են ոչ կորոնավիրուսի, այլ հիվանդանոցում ստացած կոտրվածքներից, ուղեկցող այլ հիվանդություններից, երկար ժամանակ սոված և ծարավ մնալուց, օրենսդրորեն իրավախախտում է, ինչը ենթակա է պատասխանատվության կիրառման: Նշված մեղադրանքների հիմնական մասը ենթադրում է քրեական հետապնդման իրականացում, իսկ դրա մեջ կեղծ մեղադրանքների կոչերն արգելված են ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով:

Նշենք ևս մեկ արտահայտություն արձանագրությունից՝

Էս մարդը ասում է պետք է դիմակ կրեք, թե չէ կտուգանեմ, երթուղայինը չեմ ախտահանելու, 1 նստատեղի վրա 4 ուղևորով եք նստելու, շնչելու եք իրար վրա, կորոնավիրուսով վարակվելու եք, որպեսզի ես տուգանեմ և ստանամ պարգևավճարներ, ԱԺ-ն ստանա պարգևավճարներ և հյուհնագանդ կատարի Սորոսի և Ալիևի հրահանգները:

Ելնելով հաղորդման հեղինակի և հյուրերի հայտարարություններից՝ հետևում է, որ հայտնի չէ, ինչ գիտական, հետազոտական տվյալների վրա են հաղորդում կորոնավիրուսի այս կամ այն ինֆորմացիան և այս արտահայտությունները, որ «կորոնավիրուսային պատմությունը իր ետևում շատ թաքնված շերտեր ունի, կորոնավիրուսի թվերը իրենք (իշխանությունը) ցույց են տալիս, որ աճում է, սակայն մի քանի օր անց ներկայացնում են, որ նվազում է, ուստի այն չկա, այլ կորոնավիրուսային պատմությունը շատ ձեռնտու է իշխանությանը» որպես բացարձակ ճշմարտություն ներկայացնելը, բացահայտ խուճապ առաջացնող ենթադրությունները և դրանց անընդհատ կրկնություններով փորձում են ստեղծել անվստահության և խուճապային մթնոլորտ երկրում:

Ակնհայտ է, որ Հայաստանում հայտարարված արտակարգ դրությունը, հետագայում կարանտինով դրա փոխարինումը, ապօրինաբար չէ սահմանված, ուստի միայն այսքանը բավարար է փաստելու սուտ մատնության փաստը: Ավելին, նշված հաղորդման ընթացքում մեղադրանքներ են հնչեցվում ՀՀ վարչապետի և Կառավարության այնպիսի աշխատանքի մասին, որը հատուկ է թշնամու պահվածքին, նաև կորոնավիրուսի դեմ օրնիբուն պայքար իրականացնող բժիշկները մեղադրվում են իրենց բուժման տակ գտնվող հիվանդների սպանության մեջ: Ավելին քան ակնհայտ է այս փաստերի կեղծ լինելը, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հաղորդումը հեռարձակվել է ՀՀ-ում սահմանված կարանտինի պայմաններում, ավելի է բարձրացնում դրա հանրային վտանգավորությունը և նման հաղորդումների բացառումը կարևոր նշանակություն ունի: Նշվածը հաստատելու մասին բերենք ևս մի քանի արտահայտություններ արձանագրությունից.

(~9:50) – Ծրագիրն իրականացնելու համար տարբեր կերպարների կեցվածքների մեջ կարելի է մտնել: Մարդկանց վախեցնելով են զբաղված: Իրենց կեցվածքների հետ կապված հասարակության մեջ նրանց նկատմամբ իրոնիա է առաջացել: Թշնամին պատրաստվում է պատերազմի, իրենք այստեղ զավառական մակարդակի ներկայացումներ են բեմադրում (2050թվի մասին):

(~11:20) – լինելով դասալիքի կին, առավել ևս իրենց ընտանիքում, որն է մեկը ծառայած չէ:

(~12:50) – Այս իրավիճակը, որի մեջ մենք ապրում ենք, դա մաքուր հոգեբանական պատերազմի իրավիճակ է: Գունավոր հեղափոխությունները, այն ինչ մեզ մոտ տեղի ունեցավ, դա դասական գունավոր հեղափոխություն է, որի անքակտելի բաղադրիչը դա պատերազմն է, ես մի տեսակ թշնամու ձեռք եմ տեսնում մեր երկրի ներսում: Չի բացառվում, որ մենք կունենանք պայթյունային վիճակներ:

Սա թշնամու ծրագիրն էր, որ իրականացվեց հայի ազգանունը կրող, բայց ոչ հայի միջոցով, ես գնալով համոզվում եմ, որ մեր երկիրը ղեկավարում է անձ, ով հայ չէ:

Սեպտեմբերի 21-ին Նիկոլ Փաշինյանը ասաց. Հայաստանի վերափոխման ռազմավարություն ենք իրականացնում: Այսինքն, Հայաստանը վերափոխում ենք ի շահ թուրքի, ի շահ ազերու: Միայն ազերուն է ձեռնտու, որ մեր աղջիկները համասեռամու դառնան, տղաները ևս, մենք բոլորս խոսենք այլասերվածությունից:

Կաշառք կա, ավելի մեծ չափերի կա կաշառք, իրենք ուղղակի աչք են փակում: Աննա Հակոբյանը պետք է կանգնի հայելու առաջ և հասկանա Մտեփանակերտում ազերու հետ մուղամ լսելու իրավունք ունի՞, իրավունք ունի՞ ասելու, որ մեր սնազգեստ մայրերը հանուն ոչինչի են սնազգեստ դարձել:

Նա դասալիքի մայր է, ով ծառայել է ամենավերջին սերնդի ամենազնացով և թիկնազորով:

(~28:00) – Մարդիկ այլևս այդ խոսքերը չեն ընկալում, այն ինչին հավատում էին ոգևորված: Հիմա քառսի իրավիճակ է: Հայաստանը արտաքին կառավարման տակ գտնվող երկիր է, ավաղ: Եթե ուզում ես պետությունը թուլացնել, վերացնել, ստեղծիր ներքին քառս:

Այս թիրախավորված արտահայտությունները վերաբերվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին և նրա ընտանիքին, և այստեղ փաստենք նաև այս արտահայտությունների էթիկական կողմը: Մասնագիտական էթիկան ևս կարևոր նախապայման է մեղիա լսարանին պատշաճ տեղեկատվության տրամադրման հարցում, որն այս տեսալսողական հաղորդման մեջ բացակայում է: Խոսքը նախ և առաջ վերաբերում է տեղեկատվության ճշմարտացիությանը, դրա ճշգրտությանն ու օբյեկտիվությանը: Տեսալսողական հաղորդման հյուրերը, իսկ հեղինակը հատկապես պետք է հարգեն անձանց իրավունքները, ինչպես նաև պատկերացնեն այն սահմանը, որից հետո խոսքի ազատության իրավունքը վերածվում է իրավախախտման:

Այսպիսով, փաստենք Օրենքով տեսալսողական մեղիաձառնություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված՝ ապահովել տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության իրազեկումը, մասնավորապես՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ իրազեկումը, Օրենքով սահմանված է նաև տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելու արգելքը, իսկ Հեռարձակողի կողմից «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման ընթացքում չեն պահպանվել տեսալսողական հաղորդումներում այս դրույթների պահպանումը:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ 2020 թվականի

սեպտեմբերի 11-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվել է կարանտին և Հայաստանի համար այս ծանր ժամանակաշրջանում տեսալսողական մեդիաձևառություն մատուցողների կարևոր առաքելությունն է համաճարակային իրավիճակում հանրությանը ստուգված փաստերի և իրադարձությունների մասին օբյեկտիվ, ստուգված փաստերի վրա հիմնված տեղեկատվության իրազեկումը՝ կարևորելով բնակչության առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման նպատակով համապատասխան կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Մակայն, Հեռարձակողը անտեսելով Օրենքի պահանջը և նույնիսկ այս համաճարակային իրավիճակում հեռարձակել է հաղորդում, որտեղ հնչում են կոչեր, ոչ հավաստի փաստերի վերաբերյալ ենթադրություններ, չփաստարկված կարծիքներ և ակնհայտ սուտ տեղեկություններ:

Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ հաղորդումն ուղիղ եթերով չէր հեռարձակվում, նախօրոք տեսագրված էր, և այս նույն հաղորդումը հեռարձակվել է նաև «Արմնյուզ ՖՄ» լսողական ծրագրի եթերում 2020 թվականի սեպտեմբերի 28-ին և նշված փաստերի համադրումը հանգեցնում է այն եզրակացության, որ Հեռարձակողի կողմից եթերում նշված տեսալսողական հաղորդման հայտնվելը պատահականություն չէ և բացառվում է խմբագրակազմի անփութությունը և այս դրվագով փաստում է նշված երկու հեռարձակողների կանխամտածված թշնամանք, կեղծիք, ատելություն սերմանելու խմբագրական քաղաքականության մասին:

Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված են տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովման դեպքերը, մասնավորապես 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողները պետք է ապահովեն՝ իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:»

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի հեղինակագորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝ խախտվել են Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Լիցենզիայի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ

այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը սահմանում է.

Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Վերը նշվածից ակնհայտ է, որ առկա է Հեռարձակողի լիցենզիայի գործողության կասեցման հիմքերը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 58-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Կիրառել վարչական տույժ՝ կասեցնել «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության լիցենզիայի գործողությունը «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով՝ 30 օր ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

19 հոկտեմբերի 2020թ.

ք. Երևան